Ինչպես հասկանալ հանձնարարություններն ու IEP գործընթացը

ԴՈԿՏՈՐ ՓՈԼԵԹ ՔՈՍՍ

ՀԱՏՈՒԿ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺՆԻ ՎԱՐՉ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28, 2022

Նախնական ուղղորդման գործընթաց

- Եթե ծնողը կամ դպրոցի աշխատակիցը մտահոգված է աշակերտի կրթական, վարքագծի կամ սոցիալ-հուզական առաջադիմությամբ, նրանք պետք է ուղղորդեն նրան աշակերտի հաջողության թիմին (SST):
- Աջակցման բազմաշերտ համակարգերը (MTSS) և Աշակերտի հաջողության թիմը (SST) գործընթացներ են, որով նպատակաուղղված, կանոնավոր միջամտությունները հատկացվում և փաստագրվում են դպրոցի կողմից:
- Նպատակաուղղված միջամտությունը պետք է հավատարմությամբ իրականացվի 6-8 շաբաթվա ընթացքում, որից հետո չափվի առաջընթացը:

Հատուկ ուսուցման ուղղորդում

- Ըստ օրենքի, յուրաքանչյուր անձ, ով աշխատում է երեխայի հետ և մտավախություն ունի, որ կարող է երեխան հաշմանդամություն ունենալ, ապա կարող է ուղղորդել աշակերտին Հատուկ ուսուցման բաժնին: (սովորաբար ծնողը կամ դպրոցի աշխատակիցը)
- Ուղղորդումը պետք է կատարվի գրավոր կերպ, ստորագրված և ամսաթիվ դրված, ինչպես նաև նշված, թե ինչ քննություն պետք է անցկացնել:
- Գրավոր ուղղորդումը ստանալուց հետո, դպրոցական շրջանը պետք է 15 օրվա ընթացքում ՊԱՏԱՍԽԱՆԻ:

Ե՞րբ դիմել հատուկ ուսուցման օնության:

- Աշակերտին պետք է ուղղորդել դեպի հատուկ ուսուցման և ծառայություններին, միայն այն դեպքում, եթե համապատասխան ռեսուրսները հաշվի առնվել և օգտագործվել են ավանդական կրթության ծրագրում: (Կրթական կոդեքս 56303)

Քննել, թ՞ե չքննել: Դա է հարցը:

- Եթե պարզվի, որ քննություն հանձնելն անհրաժեշտ է, ապա գնահատման ծրագիրը տուն կուղարկվի 15 օրացույցային օրվա ընթացքում:

- Եթե քննություն հանձնելը տեղի չէ, ապա աշակերտի հաջողության թիմի (SST) ժողով կհրավիրվի 15 օրվա ընթացքում, եթե այն դեռ տեղի չի ունեցել: Դպրոցն իրականացնում է միջամտությունները RTI բուրգի միջոցով, վերահսկում առաջընթացն ու 6-8 շաբաթ հետո նորից հանդիպում՝ աշակերտի առաջադիմությունը ստուգելու համար:

Գնահատման ծրագիր

- Թվարկել քննվող ոլորտները, որոնք կքննվեն և որակյալ մասնագետները, ովքեր կանցկացնեն դրանք:
- Դպրոցի հոգեբան – ճանաչողական քննություն, սոցիալ-հուզական քննություն, ADHD քննություններ
- Հատուկ ուսուցման ուսուցիչ – ակադեմիական քննություն
- Լոգոպեդ – խոսքի քննություն
- Մասնագիտական թերապիա – մասնագետի գնահատում
- Ստորագրել և դպրոցին հանձնել գնահատման ծրագիրը 15 օրվա ընթացքում:
- Դպրոցական շրջանն օրացույցային 60 օրվա ընթացքում պետք է կատարի գնահատումները և IEP ժողով հրավիրի:

Ծնողի իմաստալից մասնակցություն

- Ծնողները պետք է բովանդակալից կերպ ներգրավվեն գնահատման և IEP ծրագրի գործընթացներին: Իրավաբանական տերմինը «իմաստալից մասնակցությունն» է:
- - Բացատրել գնահատման գործընթացը

- Գնահատման ընթացքում հարցազրույցներ, ստուգաթերթիկներ

- Ժողովներին մասնակցելու նախապես ծանուցում

- Անհրաժեշտության դեպքում, թարգմանչի տրամադրում ժողովների ընթացքում

- Հարցեր տալ քննությունը վարողներին և IEP թիմին

- Տարվա ընթացքում տեղեկացվել երեխայի կատարած առաջադիմության մասին:

Հատուկ ուսուցման որակավորում – 3 չափանիշ

- Աշակերտը պետք է հաշմանդամություն (անկարողունակություն) ունենա:
- Հաշմանդամությունը պետք է զրկի աշակերտին ուսումնական ծրագրի հասանելիությունից:
- Այն աստիճանի, որ աշակերտին հատուկ ուսուցում անհրաժեշտ լինի:

Հաշմանդամության դաշնային տեսակներն ըստ IDEA օրենքի

- Աուտիզմ (AUT)
- Խլություն-կուրություն (DB)
- Խլություն (DEAF)
- Զգացմունքային խանգարում (ED)
- Լսողության խանգարում (HI)
- Մտավոր հաշմանդամություն (ID)
- Բազմակի հաշմանդամություն (MD)
- Օրթոպեդիկ խանգարում (OI)
- Առողջական այլ խանգարումներ (OHI)- ներառյալ ADHD
- Ուսուցման հատուկ հաշմանդամություն (SLD)
- Խոսքի կամ լեզվի խանգարում (SLI)
- Ուղեղի վնասվածքային վնաս (TBI)
- Տեսողական խանգարում, ներառյալ կուրություն (VI)

Համապատասխանություն



- Սկզբնական IEP և դրանից հետո ամեն տարի կրկնվող (տարեկան)
- Երեք տարին մեկ անգամ (տեղի է ունենում երեք տարին մեկ անգամ)
- Պետք է իմանաք, ձեր երեխայի IEP ծրագրի ամսաթիվը:
- Ծնողը պետք է նախապես իմանա, եթե IEP թիմի որևէ անդամ բացակայելու է ժողովի ընթացքում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ IEP ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

- IEP ԹԻՄ
- Ադմինիստրատոր
- Ընդհանուր ուսուցման ուսուցիչ
- Հատուկ ուսուցմում տրամադրող
- Հարակից ծառայություններ տրամադրող

(խոսք, OT, APE, PT և այլն)

Հրավերքը կընդգրկի, թե ով է ներկա գտնվելու ժողովին:

- IEP ժողովին ներկա գտնվելու համար, ծնողը կարող է հրավիրել ցանկացած անձի:
- Ծնողը պետք է 24 ժամ առաջ տեղեկացնի, եթե հրավիրում է իր իրավաբանին ներկա գտնվել ժողովի ընթացքում:

Ժողովի օրակարգ

- ✓ Ընթացակարգային երաշխիքներ
- ✓ Ծնողի/կրթական իրավունքների պահապանի (ERH) մտահոգություններ
- ✓ Հանձնարարություններ/ներկայիս մակարդակները
- ✓ Հասանելիություն
- ✓ Կրթական կարիքների ոլորտներ
- ✓ Նպատակներ
- ✓ Տեղաբաշխում/ծառայություններ
- ✓ FAPE-ի առաջարկ
- ✓ Վերանայել նշումները

- ▶ Հարցեր տվեք
- ▶ Խնդրեք բացատրել հապավումները:

Անվճար, համապատասխան հանրային կրթություն (FAPE)

- IEP ժողովի վերջում, որի ընթացքում ծնողը իմաստալից կերպով մասնակցել է, դպրոցական շրջանը կատարում է FAPE-ի առաջարկը:

- FAPE-ն տեղաբաշխման և ծառայությունների առաջարկ է, որտեղ աշակերտների կարիքները կբավարարվեն լավագույն ամենաքիչ սահմանափակող միջավայրում: Նպատակը համաձայնությունն է:

- Ծնողները կարող են համաձայնվել կամ չհամաձայնվել FAPE-ի առաջարկի հետ: .

Ժողովից հետո

- Ժողովի ավարտից հետո, ծնողին պետք է ներկայացնել IEP ծրագրի պատճեն և հանձնարարություններով:
- Ծնողները պարտավոր չեն համաձայնություն ստորագրել ժողովի ընթացքում:
- Ծնողները կարող են իրենց համաձայնությունը տալ IEP ծրագրի բոլոր կետերի, մի քանի կետի կամ ոչ մի կետի համար:
- IEP ծրագիրն, ընդգրկելով նպատակներ, տեղաբաշխում և ծառայություններ, չի կարող իրականացվել, առանց ծնողի համաձայնության:

Իրականացում

- Իրականացնել, համաձայնություն ստանալուց հետո հնարավորիս շուտ:
- Ծնողները պետք է կանոնավոր կերպով տեղեկացված լինեն աշակերտի առաջադիմության մասին այնպես, ինչպես ընդհանուր ուսուցման դասարանի աշակերտները:
- Եթե աշակերտը չի առաջադիմում իր նպատակներին հասնելու համար, ապա պետք է տեղեկացնել ծնողին և IEP ժողով հրավիրել:
- Ցանկացած ժամանակ, ծնողը կարող է IEP ժողով պահանջել:
- Ծնողի պահանջը ստանալուց հետո, դպրոցական շրջանը պետք է ժողով հրավիրի 30 օրվա ընթացքում:

ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ

Աշակերտները առաջադիմում են և հասնում իրենց նպատակներին:

ՀԱՐՑԵՐ ՈՒՆԵ՞Ք

